ՀՀ Արմավիրի մարզի Բագարանի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ Բագարանի գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Երկրորդ կարգի մասնագետ ծածկագիր (3.3-1)

Աշխատակազմի Երկրորդ կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը:
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է գույքահարկի և հողի հարկի գանձումը , տեղական տուրքերի և վճարների , համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի , համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձում :
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում և ներկայացնում է սահմանված կարգով հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց ցուցակը՝ համապատասխան միջոցներ կիրառելու համար:
Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
-Առնվազն միջնակարգ կրթություն
Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015 թվականի փետրվարի 23 -ին, ժամը12:00-ին Բագարանի գյուղապետարանի շենքում:
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.
Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- դիմում մրցութային հանձնաժողովի անունով(ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճեները՝ բնօրինակի հետ միասին
- հայտարարություն այն մասին,որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընգրկված հիվանդություններից որևէ մեկով:
Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ, կամ սահմանափակ գործունակ:
- արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճեները,
- մեկ լուսանկար 3x4 չափսի
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:
Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներին ներկայացված փաստաթղթերի պատճեները ետ չեն վերադարձվում:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից ՝ Բագարանի գյուղապետարանում (հեռ. (093) 12-66-08) և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն (հասցե Աբովյան 71, հեռ (0237) 2-76-49, (0237) 2-07-70),
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015 թ. Փետրվարի 05-ը: